



**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԿԻ ԲԵՆԱՅԻՆ ԿՈՍԲԻՆԱՏ»  
 ՓԲԸ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ  
 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԵՐ  
 ՔԱԶԱՐԱՆԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ  
 Օգոստոս 2019**

Իրականացնող՝ ՓԳԹ Անահիտ Մկրտչյան  
 «Համայնքային փոխօգնություն» Սոցիալական ՀԿ ղեկավար



**ԵՐԵՎԱՆ, ՕԳՈՍՏՈՍ 2019**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի «Հանքարդյունաբերության ազդակիր համայնքները՝ ԱՃԹՆ գործընթացի լիարժեք մասնակիցներ» դրամաշնորհային ծրագրի նպատակն է ապահովել ԱՃԹՆ-ի կատարումը քաղաքացիական հասարակության մասնակցության, հասարակական դեբատների անցկացման և հասարակության որոշումների կայացման գործընթացի մասնակցության ապահովմամբ: Որպես ծրագրի թիրախ ընտրված են Լոռի, Գեղարքունիք, Արմավիր, Սյունիք մարզերի հանքարդյունաբերությանն առնչվող համայնքները:

Տե՛ս քարտեզ N1



Քարտեզ 1. Ծրագրի թիրախ համայնքերը

ԶՊՄԿ ՓԲԸ

## ՔԱԶԱՐԱՆ

«Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» (ԶՊՄԿ) ՓԲԸ-ի ենթակառուցվածքները տեղակայված են Սյունիքի մարզի Քաջարան և Կապան խոշորացված համայնքների տարածքներում: Քաջարան քաղաքը գտնվում է Սյունիքի մարզի Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջին՝ մարզկենտրոնից 26 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերևույթից 1850 մ բարձրության վրա: 1947-1958 թվականների քաղաքատիպ ավանտ այնուհետև քաղաք է անվանվել և ունի 2,8 կմ<sup>2</sup> մակերես, գտնվում է ծովի մակարդակից 1950 մետր բարձրության վրա<sup>1</sup>:



Նկար 1. Քաջարանի համայնապատկերը

---

<sup>1</sup> Ա. Ա. Սալանյան, Հ. Ղ. Գրգեարյան (1981): Հայկական ՄՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 198

1831թ. Քաջարանի բնակչությունը կազմել է 50 մարդ, 1959թ.՝ 11527, 2015թ.՝ 7000: Քաջարանի բնակչության մի մասը 1946 թվականին Իրանից, Սիրիայից, Կիպրոսից գաղթածներն են<sup>2</sup>:

1951թ. որպես պետական ձեռնարկություն ստեղծվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը շահագործում է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը և, հանքաքարը վերամշակելով, ստանում մոլիբդենի և պղնձի խտանյութեր: 1951-1954 թթ. հանքը շահագործվել է ստորգետնյա եղանակով, մինչև 1962թ.՝ համակցված (ստորգետնյա եւ բացահանք), իսկ դրանից հետո՝ միայն բաց եղանակով<sup>3</sup>:

2004թ. կոմբինատը մասնավորեցվել է:

2007թ. հաստատված Քաջարանի բացահանքի և կոմբինատի արտադրողականության ընդլայնման նախագծերով ԶՊՄԿ-ն իր արտադրողականությունը հասցրեց 12,5 մլն տ/տարեկան<sup>4</sup>: Սակայն, 2016թ. Համաշխարհային բանկի պատվերով արված «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում-Հայաստան» ուսումնասիրության մեջ նշվում է, որ ԶՊՄԿ-ն տարեկան արդյունահանում է մոտ 18,5 մլն տ հանքանյութ<sup>5</sup>: 2016թ-ին ԶՊՄԿ-ն իրավունք ստացավ մինչև 2041 թ-ը տարեկան արդյունահանել 22 մլն տոննա հանքաքար, որի մեջ պղինձը 0,225 տոկոս է, մոլիբդենը՝ 0,03<sup>6</sup>:

Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) 1-ին ազգային զեկույցի համաձայն՝ 2017թ. կոմբինատի շահագործման աշխատանքներում ընդգրկված է եղել 3726 մարդ<sup>7</sup>:

Բացի հանքարդյունաբերությունից Քաջարան քաղաքում զարգացած են նաև սննդամթերքի և պատրաստի մետաղե պատրաստուկների արտադրություններ:

---

<sup>2</sup> Հայաստանի հանրապետության բնակավայրերի բառարան, էջ 23

<sup>3</sup> Հասանելի է [www.mnp.am/uploads/1/](http://www.mnp.am/uploads/1/)

<sup>4</sup> «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխություն (ներառյալ՝ արդյունահանման ծավալների փոփոխություն, ընդերքի տեղամասի ընդլայնում, թույլտվության ժամկետի երկարաձգում» ՇՄԱԳ, 2016թ.

<sup>5</sup> <http://www.ecolur.org/files/uploads/armeniastrategicassessment.pdf>

<sup>6</sup> «ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխություն (ներառյալ՝ արդյունահանման ծավալների փոփոխություն, ընդերքի տեղամասի ընդլայնում, թույլտվության ժամկետի երկարաձգում» ՇՄԱԳ, 2016թ.

<sup>7</sup> <https://www.eiti.am/hy/annual-reports/2018/>

Քաջարան քաղաքը 1996 թ. նոյեմբերի 10-ի ընտրություններով ձևավորվել է որպես տեղական ինքնակառավարման մարմին, իսկ 2017 թ-ից դարձել է խոշորացված համայնքի կենտրոն՝ իր կազմում ընդգրկելով Անդոկավան, Աջաբաջ, Բաքիկավան, Գեղավանք, Գեղի, Գետիշեն, Լեռնաձոր, Կաթնառատ, Կավճուտ, Կարդ, Կիցք, Չագիկավան, Ներքին Գիրաթաղ, Նոր Աստղաբերդ, Ոչեթի, Վերին Գեղավանք, Վերին Գիրաթաղ, Փուխրուտ, Քաջարանց, Քարուտ բնակավայրերը:

Մյուս ազդակիր բնակավայրերի համեմատ Քաջարանի թե՛ բնակչության եկամտի հնարավորությունները, թե՛ ենթակառուցվածքների վիճակը, թե՛ ապագայի հանդեպ հեռանկարի ու կյանքի որակի առումով տարբերությունները հսկայական են:

## ԱՐԾՎԱՆԻԿ

Կապան խոշորացված համայնքի Արծվանիկ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 12 կմ հյուսիս-արևելք: Մակերեսը 20 կմ<sup>2</sup> է, գտնվում է ծովի մակարդակից 1150 մ բարձրության վրա, ունի 572 բնակիչ:

Արծվանիկի պատմությունը գալիս է մ.թ.ա. IV-I դդ.: Արծվանիկի հնություններից է համարվում 450-500 տարեկան փռչնի ծառը:

ԶՊՄԿ ՓԲԸ-ի կողմից Արծվանիկ բնակավայրի գյուղատնտեսական նշանակության հողերի աստիճանական գրավման արդյունքում 1977թ. շահագործման հանձնված պոչամբարի միայն հայելին 2016 թվականին արդեն 288 հա էր<sup>8</sup>: Տե՛ս նկար 2.

---

<sup>8</sup> «Արծվանիկի պոչամբարից դուրս եկող հոսքաջրերը և դրանց արտանետման կետի տեղափոխման անհրաժեշտությունը» գիտական հոդված, ԵՊՀ գիտական տեղեկագիր, 2018, <http://www.yasu.am/files/3.%20EFFLUENTS-FROM-ARTSVANIK-TAILING.pdf>



Նկար 2.Արծվանիկի պոչամբարը

2015թ-ի մայիսի 21-ի ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արծվանիկի, Սևաքարի, Աճանանի, Չափնիի և Սյունիքի գյուղական համայնքների վարչական սահմաններում՝ որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» 791-Ն որոշմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչվեց Սյունիքի մարզի Արծվանիկ, Սևաքար, Աճանան, Չափնի և Սյունիք համայնքների վարչական սահմանների 491.8093 հա գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ Արծվանիկի պոչամբարի ընդլայնման համար<sup>9</sup>: Բացառիկ գերակա շահի ներքո ամենից շատ հողատարածքներն ի օգուտ մասնավոր ընկերության՝ Ջանգեգուրի պղնձամոլիբդենային կոմբինատի օտարվեցին Արծվանիկ գյուղից՝ 274.8378 հեկտար:

Միլիոնավոր խորանարդ մետր ծավալով թունավոր, ծանր մետաղներով լցված այս խոռոչը, որից շոգից ու քամուց գարշահոտ է «բուրում» և փոշի տարածվում, մարդկանց և բուսականության կենսունակության ախտահարման աղբյուր է:

## ՄՅՈՒՆԻՔ

Սյունիք բնակավայրն ունի 19.05 կմ<sup>2</sup> մակերես, ԲԾՄ720 մ, 2010 թվականի տվյալներով բնակչությունը 1294 մարդ է: Նրանք զբաղվում են անասնապահությամբ և

<sup>9</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=81470>

պտղաբուծությամբ: Տարածքում պահպանվել է նախկին պղնձաձուլարանի խարամբ: Այս բնակավայրն աղտահարվում է կոմբինատի շահագործման արդյունքում, որին մանրամասը կանդրատառնանք ստորև:

### **ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ**

Հարցազրույցի նպատակին՝ խոշորացված Քաջարան համայնքի տարբեր բնակավայրերի վրա «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության սոցիալական ազդեցությունների, դրանց մասին բնակչության իրազեկվածության մակարդակի ու ԱՃԹՆ-ի գործընթացում ընդգրկվելու մասնակցային վարքի ձևավորման հնարավորությունների բացահայտման համար ընտրվել է խորին հարցազրույցի մեթոդը:

Որպես գործիք օգտագործվել է հարցազրույցի ուղեցույցը հետևյալ բաժիններով.

1. հանքի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները
2. ընտրված համայնքների կենսագործունեության վրա հանքի՝ ազդակիր համայնքների օդին, ջրին, հողին հասցված վնասների գնահատականները
3. բնակիչների՝ սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման հարցերում
4. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները և հանքի շահագործման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարման վերաբերյալ բնակիչների առաջարկությունները

Որպես հարցման օբյեկտ ընտրվել են Քաջարան, Արծվանիկ, Սյունիք, Աճանան բնակավայրերը: Հարցազրույց վարվել է 59 տնային տնտեսություններում: Հարցազրույց վերցվել է 22 իգական և 37 արական սեռի ներկայացուցիչ, հետևյալ տարիքային խմբերից՝ (18-25)՝ 7 տնային տնտեսության ներկայացուցիչ, (26-35)՝ 17, (36-45)՝ 15, (46-55)՝ 12 (56 և ավելի)՝ 8:

Հարցազրույցին մասնակցել են մի քանի մասնագիտական խմբերի ներկայացուցիչներ, ինչպես նաև տնային տնտեսուհիներ և գործազուրկներ:

Ծրագրով նախատեսված խորին հարգազրույցը մեզ հնարավորություն տվեց բացահայտել, որ.

**Ա. ԶՊՄԿ ՓԲԸ-ի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչության նախնական տեղեկացվածության մակարդակը բարձր չէ, քանի որ** կոմբինատը հետևյալ տեղեկատվական ակցիաներից համայնքային ժողովներ, տեղեկատվական թերթիկներ, վերլուծական նյութերի քննարկում, հաշվետվությունների տրամադրում, քննարկումների կազմակերպում, իրականացրել է միայն համայնքային ժողովներ և քննարկումներ, որոնց ժամանակ համայնքի բնակչությանը տեղեկացրել է կոմբինատի շահագործման միայն դրական ազդեցությունների մասին (աշխատատեղեր, իրենց գործունեության ծավալների մեծացում, հարկեր և այլն): Մարդկանց և բնության վրա հանքի շահագործման բացասական ազդեցությունների մասին, որոնց հետ բնակչությունն ամենուր և ամեն օր բախվում է, չի ասվել: Հարցազրույցին մասնակցած 59 տնային տնտեսություններից միայն 4 քաջարանցի էին մասնակցել (ՏԻՄ աշխատող, կոմբինատում աշխատողի ընտանիք) համայնքային ժողովներին ու քննարկումներին: Օդին, ջրին, հողին հասցված սոցիալական վնասների մատնանշումից զուսպ են եղել հարցազրույցին մասնակցած կոմբինատում աշխատող տնային տնտեսությունների անդամները: Գյուղական բնակավայրերի ներայացուցիչները կոմբինատի կողմից իրենց հասցված կորուստերի գնահատման հարցում անկեղծ էին:

**Բ.** Սեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը ցածր է իրենց իսկ կողմից նշած հետևյալ պատճառներով՝ վատ տեղեկացվածություն՝ ա.կոմբինատի կողմից մուծած հարկերից ու դրա չափերից, բ. համայնքերի խոշորացման նոր իրողություններում կոմբինատի հատկացումները/հարկերի գումարները բնակավայրերի միջև բաշխման կարգից, գ. կոնկրետ ազդակիր բնակավայրի առողջության մոնիթորինգի արդյունքներից:

**Գ.** ԱՃԹՆ-ի ներդրմամբ կոմբինատի ընդհանուր գործունեության վերահսկման, թափանցիկության ապահովման նախաձեռնության, զեկույցների քննարկման, որոշումների կայացման գործընթացներում բնակիչների ներգրավվածությանը վերաբերող հարցին չորս ազդակիր բնակավայրերի տնային տնտեսությունների 37.3%-ը տեղեկացրել է, որ դրանցից և ոչ մեկում իրենք բոլորովին ներգրավված չեն: 50.8%-ը ընդհանրապես տեղյակ չէ, որ իրավունք ունենան ներգրավվել դրանցում, քանզի կոմբինատի ղեկավարությունն իր հարցերը հիմնականում լուծում է ՏԻՄ պաշտոնյաների, լիազորների հետ հանդիպումներում: Տնային



տնտեսությունների մեծ մասն իր շահերի պաշտպանությունը սեփական ձեռքերով իրականացնելու համար կարիք ունի բնակիչներ-կոմբինատի ղեկավարություն ուղիղ կապի հաստատման:

Դ. Սեփական իրավունքների ու դրանք պաշտպանելու ընթացակարգերի մասին բնակիչների թույլ իրազեկվածությունը, հանքի շահագործման իրական վնասների ու հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ մասնագիտական գնահատականների բացակայությունը կամ անհասանելիությունը, ԱՃԹՆ-ը գործընթացներում նրանց ընդգրկվելու հնարավորությունը լիարժեք չի դարձնում:

Բացահայտումների, չորս բնակավայրերից հարցազրույցի մասնակիցների գնահատականների, առաջարկությունների և մեր դիտարկումների հիման վրա ձևակերպվել են առաջարկություններ՝ կապված մասնագիտական մոնիթորինգների իրականացման, բնապահպանական հարկի և հանքի շահագործման վնասակար ազդեցությունների չափերի համապատասխանեցման, տեղեկատվության հասանելիության ապահովման և մասնակցային վարքի հմտությունների ձևավորման հետ:

#### **ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ**

***ԱՌԱՋԻՆ. ԶՊՄԿ ՓԲԸ-ի գործունեության դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ բնակչության նախնական տեղեկացվածության մակարդակը և այն ապահովող տեղեկատվության աղբյուրները:***

Հարցազրույցի այն հարցին, թե «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն համայնքի բնակչությանն արդյոք նախապես տեղեկացրե՞լ է մարդկանց և բնության վրա հանքի շահագործման բացասական ազդեցությունների մասին, Արծվանիկի, Սյունիքի և Աճանանի հարցազրույցի բոլոր մասնակիցները տվել են բացասական պատասխան: Իսկ Քաջարան բնակավայրի հարցազրույցի 13 մասնակիցներից 4-ը (ՏԻՄ աշխատողի, հանքի աշխատողի ընտանիք) այդ ազդեցությունների մասին լսել է համայնքային ժողովներին ու քննարկումներին մասնակից լինելու շնորհիվ: Սակայն, անգամ նրանք հաստատել են, որ համայնքային քննարկումների ու ժողովների ընթացքում կոմբինատի ղեկավարությունը չի զգուշացրել իր գործունեությամբ օդին, ջրին, հողին հասցվելիք հնարավոր բացասական ազդեցությունների մասին: Ասվել է միայն դրական սպասելիքների մասին՝ նոր աշխատատեղեր իրենց գործունեության ծավալների մեծացմամբ, կորպորատիվ

սոցիալական պատասխանատվության անվան տակ համայնքում պլանավորվող աշխատանքներ և այլն: Մինչդեռ մարդիկ բողոքում են, որ Կոմբինատի գործունեության արդյունքում անընդհատ բախվել ու շարունակում են բախվել բացասական ազդեցությունների հետ, որը վառ տեսանելի է մեր ամփոփիչ աղյուսակում: Տես աղյուսակ 2.

Աղյուսակ N2 *Ազդակիր համայնքերի բնակիչների գնահատականները ԶՊՄԿ-ի շահագործման ազդեցությունների*

	Մեծ բացաս. ազդեցություն	Որոշ բացաս. Ազդեցություն	մի օձ ազդեցություն	Որոշ դրական տոնեություն	Մեծ դրական ազդեցություն	Դժվ./պատ.	ԸՆԴԱՄԵՆԸ
1. Խմելու ջրի մաքրություն	7	17	16	0	0	19	59
2. Օդի մաքրություն	32	15	4	0	0	8	59
3. Ոռոգման ջրի մաքրություն	30	13	9	0	0	7	59
4. Բանջարեղենի և մրգի որակ	29	17	5	0	0	8	59
5. Համայնքային և միջհամայնքային ճանապարհների որակ	11	21	11	10	6	0	59
6. Գյուղատնտեսական նշանակու-թյան հողերի քանակ, որակ	35	10	10	0	0	4	59
7. Աշխատատեղեր	18	7	8	13	13	0	59
8. Համայնքի խոցելի խմբեր	28	28	0	0	0	3	59
9. Բնակչության առողջություն	31	11	0	5	8	4	59

Աղյուսակից երևում է, որ հիմնականում աշխատատեղերի տրամադրումն է համարվում կոմբինատի շահագործման դրական ազդեցություն: Ընդորում, այդպես մտածում են հարցազրույցի մասնակցած բոլոր քաջարանցիները և Արծվանիկի բնակիչների այն փոքր խումբը (15-20 մարդ), ում ընտանիքում կոմբինատի աշխատող կա: Դրանք կազմում են հարցազրույցի մասնակիցների 44%-ը (26 ՏՏ): Ընդհանուր առմամբ, 2017 թ. տվյալներով ԶՊՄԿ ՓԲԸ-ում աշխատել է 3 726 մարդ:

Կոմբինատում աշխատողների տնային տնտեսությունները բնակիչների առողջության վրա հանքի շահագործման թողած որևէ բացասական ազդեցություն չեն նշել: Աշխատանքը չկորցնելու վախից այդ մասին դատողություններ չեն արվել, եթե անգամ հարցազրույցը

մեկուսի է անցկացվել ու երաշխավորվել անանունությունը: Քաջարանցիներն, իրենց այսպիսի դիրքորոշումն արդարացնելիս, ասում էին. «Եթե անգամ որոշ հիվանդությունների թիվն ավելացել է, վստահ չենք, թե դա կոմբինատի գործունեության ազդեցությունից է: Գուցե հանրապետությունում առկա թունաքիմիկատներով ու սելիտրայով հարստացրած մթերքի օգտագործման ազդեցությամբ են հիվանդություններն ավելանում»:

Ինչ վերաբերում է կոմբինատում աշխատողների առողջությանը, ապա նշվել է, որ նրանք բուժման հարցում աջակցություն ստանում են:

Պատկերը միանգամայն այլ է Արծվանիկ, Սյունիք, Աճանան բնակավայրերում: Հարցազրույցին մասնակցած ԶՊՄԿ-ում աշխատողներ չունեցող տնային տնտեսությունները, որոնք «վայելում են» կոմբինատի գործունեության բացասական հետևանքների ողջ փունջը, այսօր արդեն կարողանում են բաց արտահայտվել, և անգամ բնակիչների տեղահանման գաղափար է սկսել ձևավորվել:

Նշված ազդակիր բնակավայրերի տնային տնտեսությունների 70%-ը համոզված է, որ հանքարդյունաբերության արդյունքում վնասվում է բնակիչների առողջությունը: Սյունիք բնակավայրից հարցազրույցի մասնակից բնակիչը բողոքեց, որ Արծվանիկի պոչամբարին մոտ՝ իրար կողքի ապրող իր և ևս երեք ընտանիքի միջին տարիքի չորս տղամարդիկ մահացել են քաղցկեղից:

Աճանան բնակավայրը կրում է ԶՊՄԿ-ի Արծվանիկի պոչամբարի և «Չաարատ Կապան» ՓԲԸ-ի կողմից շահագործվող Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ազդեցությունը:

Աճանան բնակավայրի բնակիչները բարձրացրեցին առողջությանը հասցված վնասների ֆինանսական փոխհատուցման հարցն այն դեպքում, երբ իրենք այդ վնասի չափի և ուղղվածության վերաբերյալ բացի բանավոր խոսքից որևէ մասնագիտական գնահատական չունեն:

Թե՛ իրենց առողջական վիճակից խիստ դժգոհ պոչամբարին մոտ ապրող գյուղաբնակները, թե՛ անգամ «չդժգոհող» քաջարանցիները տեսակետ հայտնեցին. «Մեր իրավունքների պաշտպանության մասին կկարողանայինք խոսել, եթե ջրի, օդի, հողի աղտոտվածության չափի և մարդկանց առողջության վրա դրա ազդեցության կապի մասին ձեռքներիս մի փաստ ունենայինք, որ գրագետ կռիվ տայինք»:

Թիրախ բնակավայրերի հարցազրույցի մասնակիցները պատմեցին, որ գրեթե զրկվել են գյուղատնտեսության ոլորտում **զբաղվածության ապահովման** ու եկամտի հնարավորությունից, քանի որ Արծվանիկի պոչամբարի ընդլայնմամբ կորցրել են գյուղատնտեսական նշանակության հողերը, իսկ քիմիական տարրերի ազդեցությամբ տնամերձերի մինչև 70 տոկոսի բերրիությունն անկում է ապրել, պոչամբարի տակ մնացած գետի ողջ կենդանական աշխարհը ոչնչացել է: Աճանան բնակավայրը վերջին 10-15 տարում կորցրել է իր խնձորի այգիները, իսկ բնակավայրին հարակից մոտ 40 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք անապատի է վերածվել՝ լիովին կորցնելով իր բերրիությունը:

Պոչամբարին մոտ ապրող բնակիչներին անգամ վստահեցրել են, թե ապագայում պոչամբարի տակ գտնվող հողերի՝ լցնելու և ռեկուլտիվացիայի միջոցով վերականգնումը կվերադարձնի նրանց գյուղատնտեսական արժեքը, անգամ իրենք կկարողանան դրանում կուտակված մետաղների մնացողներից օգտվել:

Հարցազրույցի մասնակիցների 80%-ը **օրի մաքրությանը** բացասական գնահատական է տվել՝ փաստելով փոշու և քիմիական նյութերի սուր հոտի առկայությունը, որ, ըստ նրանց, ալերգիաներ, գլխացավ, քթանցքի, ըմպանի սպազմ է առաջացնում: Ավելին, քիմիական նյութերը, քամու ու անձրևի հետևանքով հողին ու բույսերին նստելով, չորացնում են վերջիններիս: Սրանում պակաս դերակատարություն չունեն կոմբինատի տարածքից դուրս եկող չլվացված ծանրաքարշ մեքենաները:

**Բանջարեղենի և մրգի որակի** անկման մասին գնահատական ենք ստացել հարցազրույցին մասնակցած տնային տնտեսությունների 78%-ի կողմից: Գյուղատնտեսական նշանակության **հողերի քանակի և որակի** պակասելու ու փչացման մասին արտահայտվել է գյուղատնտեսությամբ զբաղվող Արծվանիկ, Սյունիք, Աճանան բնակավայրերի տնային տնտեսությունների 76%-ը: Օրինակ, Արծվանիկ բնակավայրում պոչամբարը կուլ է տվել վաղեմի գյուղակները և դաշտավարության, անասնապահության, այգեգործության, ծխախոտագործության և մեղվաբուծության բարենպաստ տարածքներն ու բնակիչների եկամտի հարուստ աղբյուրը: Այսօր գյուղատնտեսական նշանակության հողատարածքները գրեթե կորցրած արծվանիկցիներն ասում են. «Մենք ոչ գյուղացի ենք, ոչ քաղաքացի»: **ԶՊՄԿ-ն** մեկ տարվա կտրվածքով արծվանիկցիներին ամսական 40 000 դրամ նվիրատվություն է տալիս և 15-20 գյուղացու՝ աշխատանք: Սա բնակավայրին ապագա չի խոստանում:

Ավելացնենք միայն, որ ԶՊՄԿ-ի կողմից հողեր վերցնելու փաստից դժգոհել են նաև քաջարանցիները, քանզի դրանով իսպառ արգելափակվել է նոր կառույցներ անելու, անգամ քաղաքային գերեզմանից օգտվելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է **խմելու ու ոռոգման ջրերի** վերաբերյալ մեր արձանագրած գնահատականներին, հարցազրույցի մասնակիցների միայն 40%-ն է խմելու ջրի որակի վրա կոմբինատի շահագործման բացասական ազդեցություն նշել, իսկ 73%-ը բացասական ազդեցություն է նկատել ոռոգման ջրի որակի վրա: Մենք դժվարանում ենք դրանք մեկնաբանել, որովհետև այսպես մտածող տնային տնտեսությունները լավատեղյակ չեն աղբյուրների, գետերի սկզբնաղբյուրներից, խողովակաշարերի որակից, չեն պատկերացնում, թե իրենց ունեցած պղտոր, վատ համով, ավազոտ, վատ մատակարարվող ջուրը կոմբինատի շահագործման արդյունքում է այդպիսին դարձել, թե կան և այլ պատճառներ: Մա այլ մասնագիտական մեկնաբանման կարիք ունի:

Աղյուսակ 1-ին նայելիս՝ կնկատենք բոլոր ուղղություններով գնահատականների որոշակի տարբերություններ, որոնք ուղղակիորեն կապվում են հարցազրույցի մասնակցի՝ հանքում աշխատելու պատճառով անկեղծանալու հնարավորության հետ: Քաջարանցիների պատասխաններում նկատվել է ակնհայտ բացասական ազդեցությունների միտումնավոր անտեսում, խուսանավում: Մինչդեռ բնապահպանական վճարների չափի ու դրանց նպատակային օգտագործման հարցում հայտարարում են, որ իրենք ամենից ուժեղ ազդակիրն են և իրենք ավելի շատ գումար պետք է ծախսեն:

***ԵՐԿՐՈՐԴ. Մեփական իրավունքների մասին բնակիչների իրազեկվածությունը հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ***

2001 թվականին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը բնապահպանական վճարներից առանձին տողով հատկացումներ է անում այն համայնքների բյուջեներում, որոնց

տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն<sup>10</sup>:

Բնապահպանական վճարներից ազդակիր համայնքների<sup>11</sup> վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումները որպես նպատակային միջոցներ օգտագործվում են այդ համայնքների տարածքում՝ բացառապես բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար:

Ընկերության կողմից պետական բյուջե ամենամյա կատարվող բնապահպանական վճարներից ՏԻՄ-ը ստանում է դոտացիա և իրականացնում ծրագրեր բացառապես բնապահպանական կամ առողջապահական ծրագրերի համար՝ համապատասխանաբար 70% և 30% հարաբերակցությամբ:

Հարցազրույցների ժամանակ մենք բացահայտեցինք, որ 59 տնային տնտեսությունից բնապահպանական վճարների օգտագործմանը նվիրված օրենքին ծանոթ են 7 քաջարանցի և արծվանիկցի («լիովին» - 4, «մասամբ» - 3): Մակայն նույնիսկ սրանցից համայնքի համար այդ օրենքի օգտակարության մասին ստացանք կցկտուր, ընդհանրական, գրեթե ոչինչ չասող բացատրություններ:

Մինչդեռ, ԶՊՄԿ ՓԲԸ-ի կողմից 2016թ վճարվել է 11 990 684 դրամ, իսկ 2017թ.՝ 22 376 624 դրամ: Բայց թե ի՞նչ բնապահպանական ու առողջապահական ծրագրեր են իրականացվել, բնակիչները անտեղյակ էին: 59 տնային տնտեսությունից և ոչ մեկը տեղյակ չէր նաև այդ ծրագրերի ավագանու կազմակերպած քննարկումներից: Ինչպես հանրապետության մյուս ազդակիր համայնքներում, այստեղ նույնպես բացահայտեցինք, որ բնապահպանական վճարները ծախսվում են ՏԻՄ ղեկավարի ցանկությամբ և գերադասելի ուղղությամբ: Մինչդեռ բնապահպանական վճարները պետք է ուղղվեն օրենքով սահմանված նպատակին՝ բնապահպանական և առողջապահական վնասների հաղթահարմանը՝ «Թափոնների անվտանգ հեռացմանը», «Հատուկ պոլիգոնների ստեղծմանը», «Գործող աղբավայրերի բարելավմանը», «Աղտոտված տարածքների մաքրմանն ու վերականգնմանը», «Դեպի ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքի նվազեցմանը, կասեցմանը,

10 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք, ընդունված է 2001 թվականին

11 «Ազդակիր» են համարվում որևէ ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքները

ջրային ռեսուրսների պահպանությանը», «Կեղտաջրերի վերամշակմանը, կոյուղու համակարգի բարելավմանը», «Օդի մաքրության պահպանմանը», «Աղմուկից, վիբրացիայից և ճառագայթահարումից պաշտպանությանը», «Աղտոտված հողի մաքրում, աղտոտող նյութերի վնասազերծմանը», «Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբանական ռեսուրսների պահպանությանը», «Տեղեկատվության տարածմանը, էկոլոգիական կրթությանը», «Բնակչության առողջական վիճակի գնությունների իրականացմանը» և «Անհրաժեշտ բժշկական սարքավորումների տրամադրմանը»:

Հարցազրույցի արդյունքների վերլուծությունը բացահայտեց, որ սեփական իրավունքների, հանքի շահագործման վնասների կանխարգելման և հետևանքների հաղթահարման ուղիների վերաբերյալ բնակիչների իրազեկվածությունը ցածր է իրենց իսկ կողմից նշած վատ տեղեկացվածության պատճառով: Նրանք ցածր տեղեկատվություն ունեն՝

- կոմբինատի կողմից մուծած հարկերից ու դրա չափերից
- համայնքների խոշորացման նոր իրողություններում դրանք բնակավայրերի միջև բաշխման կարգից
- կոնկրետ ազդակիր բնակավայրի առողջության մոնիթորինգի արդյունքներից:

### ***ԵՐԸԸԸԸ. ԱՃԹՆ գործընթացներում բնակչության ընդգրկվելու հնարավորությունները***

ԱՃԹՆ-ի նպատակն ավելի թափանցիկ և հաշվետվողական պետական և գործարար համակարգի ստեղծումն է, հանրային երկխոսության խթանումը՝ դրանով իսկ կողմերի միջև փոխընթերցման երաշխավորումը: ԱՃԹՆ-ի ներդրումը վկայում է ավելի բարձր աստիճանի թափանցիկության ապահովման պարտավորություն ստանձնելու հնարավորության մասին, որից ազդակիր համայնքի բնակիչներն անմասն չեն:

ԱՃԹՆ-ի աշխատանքներին քաղաքացիական հասարակության դերակատարների (ՀԿ-ներ, արհմիություններ, ֆոնդեր, բարեգործական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, համայնքային ակտիվիստների խմբեր) մասնակցության համար շատ կարևոր է, որ բնակիչներն այնքան հետաքրքրված լինեն, որ հետևեն անհրաժեշտ տեղեկատվությանը, կարողանան ձևակերպել իրենց խնդիրները, կարողանան համագործակցել քաղաքացիական հասարակության մասնագիտացված դերակատարների հետ ու ԲԾԽ-ի միջոցով տեղ հասցնել իրենց առաջարկությունները: 2018թ. ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը ներկայացնում է 2016 և 2017 թթ-ի մետաղական

հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հիմնական տեղեկատվությունը (արդյունահանման և արտահանման ծավալներ, ֆինանսական հոսքեր և այլն)<sup>12</sup>:

ԶՊՄԿ ՓԲԸ-ի ընդհանուր գործունեության վերահսկման, թափանցիկության ապահովման նախաձեռնության, զեկույցների քննարկման, որոշումների կայացման գործընթացներում բնակիչների ներգրավվածությանը վերաբերող հարցին չորս ազդակիր բնակավայրերի տնային տնտեսությունների 37.3%-ը փաստում է, որ իրենք «բոլորովին ներգրավված չեն» «հանքի ընդհանուր գործունեության վերահսկման», «թափանցիկության ապահովման», «զեկույցների քննարկման», «հանքի գործունեությանը վերաբերող որոշումների կայացման» գործընթացներում: 11.9 %-ը, որ կոմբինատի կամ ՏԻՄ աշխատակիցներ են, «մասամբ» ներգրավվածություն են նկատում: Չորս բնակավայրից հարցազրույցի մասնակցների 50.8%-ն ընդհանրապես տեղյակ չէ, որ կարող էր ներգրավված լինել այդ գործընթացներում, քանզի կոմբինատի ղեկավարությունն իր հարցերը հիմնականում լուծում է ՏԻՄ պաշտոնյաների հետ հանդիպումներում: Պատահական չէ, որ հատկապես տնային տնտեսությունների այս խումբն իր շահերի պաշտպանությունը ցանկանում է իրականացնել սեփական ձեռքերով և հատկապես բնակիչներ-կոմբինատի ղեկավարություն ուղիղ կապով:

Մեր հարցազրույցի մասնակիցների կողմից «Զանգեզուրի պղնձամուխիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության բնապահպանական ու առողջական վնասների առնչությամբ բնակիչները կատարել են առաջարկություններ, որոնք իրենց կարծիքով կնվազեցնեին վտանգները: Արծվանիկի, Սյունիքի, Աճանանի բնակիչները, որոնք քաջարանցիների նման զգուշավոր չէին, վրդովված բարձրաձայնել են իրենց բնակավայրի խնդիրները, միաժամանակ նշելով, որ չնայած վերջին մեկ տարում կոմբինատի գործունեությամբ պայմանավորված բնապահպանական ու առողջական ռիսկերի հաղթահարման առումով ոչինչ չի արվել, սակայն նախկին վախի մթնոլորտը բավական ցրվել է, և այսօր արդեն կարողանում են քննադատել: Ինչ վերաբերում է սեփական իրավունքների պաշտպանության հարցում պետական պաշտպանության ապավինմանը,

---

<sup>12</sup> Հասանելի է՝ [www.eiti.am/hy/annual-reports/2018/](http://www.eiti.am/hy/annual-reports/2018/)



այս պահին նրանք դա տեսնում են համայնքին ուղիղ տրվող հարկերի տեսակների ավելացման, չափերի մեծացման մեջ:

Այսպես, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեությունը տեսանելի և սեփական գործողությունների համար բնակիչների առջև հաշվետու դառնալու համար ստացել ենք այսպիսի առաջարկություններ՝

## **ՔԱԶԱՐԱՆ**

- Բնապահպանական վճարների մասին օրենքի վերանայման անհրաժեշտությունը և նախկինի պես բնապահպանական վճարների ընդհանուր գումարից մասհանման տրամադրումը

- Կանաչապատման աշխատանքների իրականացում

- Մթնոլորտային օդի մշտադիտարկում և աղտոտվածության վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը

- «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից տարեկան շահույթի 10 տոկոսի չափով գումարի տրամադրում Քաջարան և Կապան համայնքներին: Մասնավորապես այս առաջարկը հիմնավորվեց նրանով, որ կոմբինատի բեռնատար մեքենաները վնաս են հասցնում միջպետական ճանապարհներին, մինչդեռ, այդ մեքենաները գրանցված լինելով Երևանում, գույքահարկը վճարվում է մայրաքաղաքին:

- ՀԿ-ների կողմից հանքերի գործունեության խիստ վերահսկում

- ԶՊՄԿ-ի գործունեության համար նոր տարածքների հատկացումից առաջ հանրային լսումների կազմակերպում բնակչության, այլ ոչ թե համայնքապետի հետ փաստացի համաձայնություն ձեռք բերելու համար

- Պետության կողմից օդի, ջրի, հողի պարբերական հետազոտություն և արդյունքների մասին բնակչության իրազեկում նաև տեղեկատվական թերթիկների միջոցով

- Բարեգործական հատկացումների փոխարեն բնապահպանական վճարների չափի համապատասխանեցում հասցված վնասի չափին

- ԱՃԹՆ բազմաշահառու խմբում (ԲՇԽ) հանքարդյունաբերական համայնքների անդամների ներկայացվածության ապահովում

## **ԱՐԾՎԱՆԻԿ**

1. Կոմբինատի կողմից բնակիչների տարհանման կազմակերպում

2. Առողջապահության նախարարության կողմից բնակչության առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության ուսումնասիրություն, արդյունքները կոմբինատին ներկայացում, կոմբինատի կողմից մարզի հիվանդանոցների՝ ժամանակակից գործիքներով ու բժիշկներով համալրում
3. Արծվանիկի պոչամբարի շուրջ արգելապատնեշի կառուցում

### **ՄՅՈՒՆԻՔ, ԱՃԱՆԱՆ**

1. Մայր ջրատարի մաքրում հանքարդյունաբերական թափոններից
2. Բնակչության առողջության ստուգում ու անվճար բուժում
3. Պարբերաբար և ժամանակին բնակչությանը տեղեկացում մուծված հանքարդյունաբերական ընկերությունների վճարած հարկերի չափի ու օգնությունների օգտագործման մասին

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

ԱՌԱՋԻՆ, ԶՊՄԿ ՓԲԸ-ի շահագործման դրական և բացասական սոցիալական ազդեցությունների վերաբերյալ ազդակիր համայնքերի բնակիչների **տեղեկացվածության ցածր մակարդակը** պայմանավորված է մասնագիտական հետազոտությունների արդյունքների (եթե կան) բնակչությանը չտրամադրելու, տեղական լրատվամիջոցների կողմից կոմբինատի շահագործման բացասական ազդեցությունները վատ լուսաբանելու, բնակիչների համար պարզեցված իրազեկման թերթիկների սակավության, ազդակիր բնակավայրերում բնապահպանական խնդիրներով զբաղվող տեղական ՀԿ-ների սակավության և նրանց լուսավորչական գործունեության համար արհեստական դժվարությունների ստեղծման հետ:

ԵՐԿՐՈՐԴ, օդին, հողին, ջրին ԶՊՄԿ ՓԲԸ շահագործման հասցված վնասների և տարբեր սոցիալական խմբերի համար դրանց չափի, տարածվածության ու ծավալման վնասների վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի ու **առողջապահության նախարարությունների կողմից բնակիչների շահերը պաշտպանելու պատասխանատվության ստանձման բացակայությունը** ազդակիր բնակավայրերի կենսագործունեությունը թողել է կոմբինատի «բարեհաճության» ու **ՏԻՄ չինովնիկների՝ կոմբինատին «լավ» ծառայելու վրա:**

ԵՐՐՈՐԴ, Բոլոր ազդակիր բնակավայրերում տնային տնտեսությունների բողոքը վնասների միայն ֆինանսական փոխհատուցմամբ սահմանափակումը ստվերում է կոմբինատի շահագործման վնասների կանխարգելման հարցը, աշխատանքային մշակույթը բարձրացնելու խնդիրը:

ԶՈՐԴՈՐԴ, ԶՊՄԿ ՓԲԸ-ի ազդակիր բնակավայրերում կանանց համատարած գործազրկությունն արգելակում է կանանց ինքնադրսևորման, ինքնահաստատման, ընտանիքում հարգված մայր լինելու հնարավորությունները և սոցիալական ակտիվությունը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ, ԱՃԹՆ գործընթացներում ազդակիր բնակավայրերի խոսքի հնչեղության հնարավորության սակավ լիարժեքությունը կապված է սեփական իրավունքների, բնապահպանական և առողջապահական ռիսկերի մասին մասնագիտական գնահատականների անհասանելիության ու իրավունքները պաշտպանելու ընթացակարգերի մասին բնակիչների թույլ իրազեկվածության հետ:

#### **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԱՌԱՋԻՆ, հաղթահարել բնակիչների տեղեկացվածության ցածր մակարդակը ազդակիր համայնքերի վրա ԶՊՄԿ ՓԲԸ-ի գործունեության ազդեցությունների մասնագիտական հետազոտությունների արդյունքները (եթե կան) բնակչությանը տրամադրելու, տեղական լրատվամիջոցների կողմից կոմբինատի շահագործման նաև բացասական ազդեցությունները պարբերական լուսաբանելու, բնակիչների իրավունքների մասին պարզեցված լուսավորչական թերթիկներ տարածելու, բնապահպանական խնդիրներով զբաղվող տեղական ՀԿ-ների լուսավորչական գործունեությունը խթանելու միջոցներով:

ԵՐԿՐՈՐԴ, ստանձնել պատասխանատվություն ՀՀ շրջակա միջավայրի ու առողջապահության նախարարությունների կողմից ԶՊՄԿ ՓԲԸ-ի գործունեությամբ օդին, հողին, ջրին հասցված վնասների և տարբեր սոցիալական խմբերի համար դրանց չափի, տարածվածության ու ծավալման վնասների պարբերական գնահատման ու բնակիչների շահերի պաշտպանության հարցերում:

ԵՐՐՈՐԴ, համապատասխանեցնել կոմբինատի հասցրած վնասի չափը բնապահպանական վճարներին:

ՉՈՐՐՈՐԴ, իսթանեւ ԶՊՄԿ ՓԲԸ-ի ազդակիր բնակավայրերում կանանց համայնքային ձեռնարկատիրական գործունեությունը ուսուցումների և առանց տոկոս վարկերի տրամադրման միջոցով:

ՀԻՆԳԵՐՈՐԴ, մեծացնել ԱՃԹՆ գործընթացներում ազդակիր բնակավայրերի խոսքի հնչեղության հնարավորությունը սեփական իրավունքների, բնապահպանական և առողջապահական ռիսկերի մասին մասնագիտական գնահատականների հասանելիության ու իրավունքները պաշտպանելու ընթացակարգերի մասին բնակիչների իրազեկվածության բարձրացման, ԲՇՏ-ի մեջ համայնքի անդամների ներկայացվածության ապահովման միջոցներով: